ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով ապրանքների, ծառայությունների, աշխատուժի եւ կապիտալների ազատ տեղաշարժի վրա հիմնված ընդհանուր տնտեսական տարածքի արդյունավետ տրանսպորտային ապահովման օբյեկտիվ անհրաժեշտությունը,

մեծ կարեւորություն տալով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տրանսպորտային ենթակառուցվածքների համատեղ ամբողջական եւ որակյալ օգտագործմանը, ձգտելով տրանսպորտային սակագների որոշման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելուն, համաձայնեցին ներքոհիշյալի մասին:

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ընդհանուր տրանսպորտային տարածք հասկացությունը նշանակում է այդ պետությունների տարածքներում տրանսպորտային միջոցների տեղաշարժման, բեռների եւ ուղեւորների փոխադրման, տեղեկատվական եւ սակագնային համակարգերի, ինչպես նաեւ Համագործակցության մասնակից պետությունների ազգային օրենսդրության հիման վրա եւ դրա հետագա ներդաշնակեցմամբ գործառնությունն իրականացնող տարբեր տեսակի տրանսպորտային միջոցների վարման կառուցվածքների եւ մեխանիզմների համար նախատեսված տրանսպորտային հաղորդակցությունների տեխնոլոգիապես համակցված միասնություն:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ընդհանուր տրանսպորտային տարածքը ձեւավորվում է մշակելով.

ընդհանուր տրանսպորտային տարածքի, ներառյալ երկաթուղային, օդային, ջրային եւ ավտոմոբիլային փոխադրամիջոցները, ձեւավորման հայեցակարգը եւ սկզբունքները,

տրանսպորտային ծառայությունների համար համաձայնեցված սակագնային քաղաքականության սահմանման հայեցակարգը,

սպառողների սպասարկումը բարելավելու համար տրանսպորտային համալիրի կազմակերպչական կառուցվածքի կատարելագործման հայեցակարգը,

տրանսպորտային ենթակառուցվածքների համատեղ զարգացման եւ օգտագործման ծրագրերը,

ԱՊՀ մասնակից պետությունների ընդհանուր տրանսպորտային տարածքի սահմաններում բեռների տարանցման պայմանների ապահովման ծրագրերը,

տրանսպորտային միջոցների վնասակար ազդեցությունից շրջակա միջավայրի պաշտպանության ծրագրերը,

տրանսպորտում ուղեւորների եւ սպասարկող անձնակազմի անվտանգության, ինչպես նաեւ բեռների պահպանվածության ապահովման ծրագրեր:

Վերոհիշյալ ծրագրերի (հայեցակարգերի) մշակումը կատարվում է համատեղ, Կողմերի տրանսպորտի բնագավառի իրավասու մարմինների կողմից: Այդ աշխատանքի համակարգումն իրականացնում է Տնտեսական միության Միջպետական տնտեսական Կոմիտեն:

Երկաթուղային տրանսպորտի բնագավառում Կողմերի իրավասու մարմիններն իրենց գործունեության մեջ ղեկավարվում են.

ԱՊՀ մասնակից պետությունների երկաթուղային տրանսպորտի ընդհանուր տրանսպորտային տարածքի սխեմայով, որը հաստատվում է ԱՊՀ մասնակից

պետությունների երկաթուղային տրանսպորտի գծով Խորհրդի կողմից,
Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի կողմից ընդունված համաձայնագրերով եւ որոշումներով, այդ թվում Համագործակցության Կառավարությունների ղեկավարների Խորհրդի Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների երկաթուղային տրանսպորտի համար համաձայնեցված սակագնային քաղաքականության սահմանման Հայեցակարգի մասին 1996 թվականի հոկտեմբերի 18-ի Որոշմամբ եւ Տրանսպորտային սակագների սահմանման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին 1997 թվականի հունվարի 17-ի՝ Համաձայնագրով:

ՀՈԴՎԱԾ 3

Ընդհանուր տրանսպորտային տարածքի գործունեության համար պայմանների ստեղծման եւ համակարգված տրանսպորտային քաղաքականության մշակման նպատակով Կողմերը միջոցներ են ձեռնարկում, որպեսզի՝
ներդաշնակեցնեն տրանսպորտի բնագավառում նորմատիվ-իրավական բազան,
մշակեն ֆինանսատնտեսական մեխանիզմներ տրանսպորտում համատեղ ծրագրերի իրագործման համար,
կատարելագործեն ազգային տրանսպորտային համակարգերի փոխգործակցությունը,
նպատակաուղղված պաշտպանեն ոլորտների շահերը՝ տրանսպորտային ծառայությունների ներքին եւ արտաքին շուկաներում ազգային փոխադրողների մրցունակության համապատասխան իրավական եւ տնտեսական աջակցության դեպքում,
ապահովեն սեփականության բոլոր ձեւերի տնտեսվարող սուբյեկտների բարեխիղճ մրցակցությունը,
անցկացնեն համաձայնեցված քաղաքականություն սույն Համաձայնագրի մասնակից պետությունների միջեւ միջազգային հաղորդակցության տրանսպորտային սակագների սահմանման ոլորտում,
համալրեն եւ արդիականացնեն երկաթուղային, օդային, ծովային, գետային, ավտոմոբիլային փոխադրամիջոցների պարկը,
ձեւավորեն եւ անցկացնեն համաձայնեցված գիտատեխնիկական քաղաքականություն տրանսպորտի բնագավառում,
ստեղծեն գիտական, տեխնիկական եւ տեխնոլոգիական տեղեկատվական բազայի ընդհանուր համակարգ տրանսպորտային համալիրի բնագավառում,
ստեղծեն համատեղ ձեռնարկություններ, միավորումներ, անդրազգային կորպորացիաներ տրանսպորտային համալիրի բնագավառում,
մշակեն բեռների տեղ հասցման տրանսպորտային տեխնոլոգիական սխեմաներ, այդ թվում՝ տրանսպորտի այլընտրանքային տեսակների եւ տրանսպորտային միջոցների ֆիրմային սպասարկման համակարգերի օգտագործմամբ,
սահմանեն բոլոր տրանսպորտային միջոցների, ներառյալ սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետությունների տրանսպորտային միջոցների, մուտքի (ելքի) նկատմամբ հսկողության փոխհամաձայնեցված կարգ եւ կազմակերպում,
փոխադարձության պայմանով ապահովեն բեռների եւ ուղեւորների առանց թույլտվության փոխադրումներ, սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներով տրանսպորտային միջոցների տեղաշարժ, այդ թվում՝ տարանցումով երրորդ պետություններ(ից), բացառություն են կազմում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներում գործող մաքսային կանոններին համապատասխան հատուկ բեռների փոխադրումները,
փոխշահավետ հիմունքներով բացեն փոխադրողների մուտքը սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տրանսպորտային ծառայությունների շուկա՝
տրամադրեն հավասար պայմաններ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներում տրանսպորտային եւ տրանսպորտային առաքիչ ձեռնարկությունների գործունեության համար,
անցկացնեն համաձայնեցված մաքսային քաղաքականություն,
փոխադարձության պայմանով կարգավորեն ճանապարհների եւ հաղորդակցության այլ

ուղիների օգտագործման կամ պահման, տրանսպորտային միջոցների տիրապետման կամ օգտագործման հետ կապված հարկերի եւ պետական գանձումների, ինչպես նաեւ սույն Համաձայնագրի մասնակից պետություններից մեկի փոխադրողների կողմից սույն Համաձայնագրի մյուս մասնակից պետությունների տարածքով իրականացվող ուղեւորների եւ բեռների փոխադրման ծառայություններից ստացված եկամուտներից հարկերի եւ գանձումների համակարգերը:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ընդհանուր տրանսպորտային տարածքի ձեւավորմանն ուղղված համակարգված տրանսպորտային քաղաքականության վարման համար պատասխանատու մարմիններ են հանդիսանում տրանսպորտի բնագավառում
Կողմերի իրավասու մարմինները, որոնք իրենց գործողությունները համաձայնեցնում են Համագործակցության համապատասխան միջպետական, միջկառավարական մարմինների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը համաձայնեցին անցկացնել տրանսպորտային համալիրի պետական օժանդակության քաղաքականություն, սահմանել համաձայնեցված ներդրումների, ինչպես նաեւ միջազգային չափանիշների մակարդակով ինտեգրացված տրանսպորտային համակարգերի ստեղծման առաջնային նախագծերը:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերն անհրաժեշտ են համարում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքով փոխադրվող ուղեւորների եւ բեռների պարտադիր անձնական ապահովագրության խնդրի լուծումը:

ՀՈԴՎԱԾ 7

Տրանսպորտի բնագավառում Կողմերի իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում համաձայնեցնում եւ համակարգում են իրենց գործունեությունը միջազգային տրանսպորտային կազմակերպություններում:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերն օժանդակում են տրանսպորտի բնագավառի մասնագետների ուսուցման եւ վերապատրաստման ոլորտում համագործակցությանը՝ ելնելով նրանց պատրաստվածության մակարդակին ներկայացվող համաձայնեցված պահանջներից: Սահմանված կարգով տրված ուսումնական հաստատության ավարտական որակավորման փաստաթղթերը ճանաչվում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներում, նրանց ազգային օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի իրավունքները եւ պարտավորությունները, որոնք բխում են այլ՝ ավելի վաղ ստորագրված միջազգային պայմանագրերից եւ համաձայնագրերից, որոնց մասնակից են նրանք հանդիսանում, այդ թվում՝ նաեւ Կողմերի միջեւ ստորագրվածները, եւ չեն խոչընդոտում այլ միջազգային պայմանագրերի ստորագրմանը, որոնց պայմանները չեն հակասում սույն Համաձայնագրի կատարմանը:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրը գործում է նրա ուժի մեջ մտնելու օրվանից 10 տարվա ընթացքում: Այդ ժամկետի լրանալուն պես Համաձայնագիրը ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա 10 տարի ժամանակաշրջանով, եթե Կողմերն այլ որոշում չընդունեն:
Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց առնվազն 6 ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից: Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար, այն ուժի մեջ է մտնում ավանդապահին այդ մասին ծանուցումը հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրը բաց է դրա նպատակներն ու սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից դրան միանալու համար՝ բոլոր Կողմերի համաձայնությամբ՝ նման միացման մասին փաստաթղթերը ավանդապահին փոխանցելու միջոցով:
Միացումը համարվում է ուժի մեջ մտած՝ այդպիսի միացման վերաբերյալ Կողմերի համաձայնության մասին վերջին ծանուցումը ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ կիրառման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

Կատարված է Բիշկեկ քաղաքում 1997 թվականի հոկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր Քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագիրը ստորագրել է վերապահումով. "10-րդ Հոդվածը լրացնել նոր նախադասությամբ. "Փոփոխությունները եւ լրացումները ձեւակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածով նախատեսված կարգով"":

** Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1999 թվականի օգոստոսի 5-ից: